Արմավիրի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան) հայտարարում է էմրցույթ՝ Մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիականծառայության հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 63-3.2-31)

Իրականացնում է Մարզպետարանի և Մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների կարիքների համար անհրաժեշտ աշխատանքների, ծառայությունների, ապրանքների գնման աշխատանքները: Բաժնի պետի հետ քննարկում է հաջորդ տարվա պետական բյուջեից Մարզպետարանի կարիքների համար անհրաժեշտ աշխատանքների, ծառայությունների, ապրանքների անվանացանկերի կազմման և ներկայացման աշխատանքները: Իրականացնում է Մարզի համայնքների ղեկավարների կողմից ստացված գույքային հարկերի հաշվառման համար հայտ-պահանջագրերի վերլուծման, ամփոփման աշխատանքները և ներկայացնում է ընդհանուր հայտ-պահանջագիր: Մասնակցում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի՝ Մարզին վերաբերող հատվածի կազմման, պետական բյուջեի՝ Մարզին վերաբերող հատվածի եկամուտների և ծախսերի պլանավորման աշխատանքներին, պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացված միջոցների ընթացիկ ֆինանսավորման և դրանց նպատակային օգտագործման վերահսկմանը: Համայնքներում և միջհամայնքային միավորումներում իրականացնում է ֆինանսատնտեսագիտական ստուգում: Աջակցում և մեթոդական օգնություն է ցույց տալիս տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքի բյուջեի նախագծի նախապատրաստման ընթացքում: Իրականացնում է գնման գործընթացի մրցակցային արդյունավետ, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը: Մասնակցում է պետական բյուջեի նախագծի, ինչպես նաև Կառավարության տարածքային քաղաքականության մշակման աշխատանքներին: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն՝ տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենտ) մասնագիտությունների գծով,

* քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,
* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
* տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
* համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
* անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):
Մրցույթը կկայանա 01.12.2017թ.՝ ժամը 1200 -ին, Մարզպետարանի շենքում (ք. Արմավիր, Աբովյան 71):

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 01.11.2017թ.:

Մրցույթներին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչտե ղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին ևհարցաշ արերին ծանոթանալու համար կարող են դիմել Մարզպետարանիաշխա տակազմ (ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. (0237) 2-42-62):